ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Աշխատանքի ծածկագիր 010795

ՈՐՈՇՈՒՄ

ք. Երևան 08.05.2023թ.

Բարձրագույն դատական խորհրդի 03.05.2023 թվականի թիվ ԲԴԽ-47-Ո-157 որոշմամբ կազմավորված դատավորների թեկնածուների ցուցակի քաղաքացիական մասնագիտացման բաժնի հատուկ կարգով համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության աշխատանքների արդյունքների բողոքարկման հանձնաժողովը *(այսուհետ՝ Հանձնաժողով)*

կազմով՝
Բարձրագույն դատական խորհրդի անդամ **Նաիրա Հովսեփյանի,**
Դատական դեպարտամենտի ներկայացուցիչ **Թամարա Ղուկասյանի,**
Արդարադատության նախարարության ներկայացուցիչ **Տիգրան Խաչիկյանի,**

քննելով դատավորների թեկնածուների ցուցակի քաղաքացիական մասնագիտացման բաժնի հատուկ կարգով համալրման նպատակով 2023 թվականի ապրիլի 14-ին անցկացված որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված թիվ 010795 ծածկագրով բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

Բողոքաբերի կողմից բողոքարկվել են «Թեստային առաջադրանքներ» բաժնի 42-րդ, 45-րդ, 48-րդ թեստային հարցերը, ինչպես նաև 2-րդ, 3-րդ և 4-րդ խնդիրները:

Հանձնաժողովը Բողոքաբերի կողմից վկայակոչված «Թեստային առաջադրանքներ» բաժնի 42-րդ թեստային հարցի մասով արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 174-րդ հոդվածից և խնդրով հաստատված փաստերից բխում է, որ գույքի վերամշակողը գործել է բարեխղճորեն և գույքի շուկայական արժեքն էականորեն բարձրացել է, ինչի վերաբերյալ ներկայացվել են բավարար ապացույցներ: Նշված վավերապայմանները թույլ են տալիս պնդելու, որ նյութերը վերամշակողի կողմից առկա է վերամշակման արդյունքում ստեղծված գույքի նկատմամբ

սեփականության իրավունքի ծագման հիմք, որպիսի պայմաններում վերջինս պետք է նյութերի սեփականատիրոջը փոխհատուցի փայտանյութի արժեքը: Նման պայմաններում Հանձնաժողովը գտնում է, որ հիշյալ թեստային հարցի վերաբերյալ Բողոքաբերին անհրաժեշտ է շնորհել 1 միավոր:

Ինչ վերաբերում է «Թեստային առաջադրանքներ» բաժնի 45-րդ թեստային հարցին, ապա Բողոքաբերի կողմից ընտրված պատասխանի ճշմարտացիության վերաբերյալ հիմնավորումները չեն բխում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան իրավակարգավորումների տրամաբանությունից, հետևաբար Հանձնաժողովը գտնում է, որ Գնահատման հանձնաժողովի կողմից հիշյալ թեստային հարցի վերաբերյալ Բողոքաբերին նշանակված 0 միավորը ենթակա չէ բարձրացման:

Հանձնաժողովը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Թեստային առաջադրանքներ» բաժնի 48-րդ թեստային հարցի մասով Բողոքաբերի կողմից ընտրված պատասխանը համապատասխանում է ուղենիշային ճիշտ պատասխանին, իսկ Գնահատման հանձնաժողովի կողմից այն գնահատվել է 0 միավոր, ուստի նման պայմաններում Հանձնաժողովը գտնում է, որ հիշյալ թեստային հարցի վերաբերյալ Բողոքաբերին անհրաժեշտ է շնորհել 1 միավոր:

Անդրադառնալով 2-րդ, 3-րդ և 4-րդ խնդիրների վերաբերյալ Բողոքաբերի կողմից ներկայացված հիմնավորումներին՝ Հանձնաժողովը հարկ է համարում արձանագրել, որ 2-րդ խնդրին տրված պատասխանի շրջանակներում Բողոքաբերն անդրադարձել է խնդրի փաստական հանգամանքների նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կիրառելի հոդվածներին և որոշակիորեն մեկնաբանել դրանք, որպիսին Բողոքաբերի կողմից մատնանշված հանգամանքների հետ մեկտեղ ուղղակիորեն հիմնավորում է նշված խնդրի կապակցությամբ Բողոքաբերին ևս 1 միավոր շնորհելու անհրաժեշտությունը:

3-րդ խնդրի շրջանակներում Բողոքաբերը բովանդակային իմաստով անդրադարձել է օրենքով արգելված բոլոր այն գործողություններին, որոնք բերում են դատական իշխանության հեղինակազրկմանը: Ընդ որում, Բողոքաբերն իրավացիորեն անդրադարձել է նաև նվերներ ընդունելու արգելքը սահմանող իրավական կարգավորմանը, որպիսին նույնիսկ խնդրի լուծման ուղենիշում ամրագրված չէ: Հիշյալ, ինչպես նաև բողոքում արծարծված այլ հանգամանքները Հանձնաժողովը դիտարկում է բավարար նշված խնդրի կապակցությամբ Բողոքաբերին ևս 2 միավոր շնորհելու համար:

4-րդ խնդրի շրջանակներում Բողոքաբերն, անդրադառնալով դատարանի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի նորմերի խախտմանը, այսուհանդերձ, արձանագրել է նախադեպային իրավունքի լույսի ներքո դատական պաշտպանության իրավունքի սահմանափակման անթույլատրելիությանը, որպիսի պայմաններում նշված խնդրի շրջանակներում Բողոքաբերին անհրաժեշտ է շնորհել ևս 1 միավոր:

Վերոգրյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը, բողոքը քննելով ներկայացված հիմքերի և հիմնավորումների սահմաններում, արձանագրում է, որ այն հիմնավոր է մասնակի, ուստի «Թեստային առաջադրանքներ» բաժնի 42-րդ և 48-րդ թեստային

հարցերից ստացած 0-ական միավորները պետք է փոփոխել և դարձնել 1-ական միավոր, իսկ 45-րդ թեստային հարցից ստացած 0 միավորը թողնել անփոփոխ, ինչպես նաև 2-րդ, 3-րդ և 4-րդ խնդիրների մասով Բողոքաբերին անհրաժեշտ է լրացուցիչ շնորհել համապատասխանաբար 1, 2 և 1 միավորներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Բարձրագույն դատական խորհրդի 02.02.2023 թվականի թիվ ԲԴԽ-15-Ո-55 որոշման 4-րդ հավելվածի 4-րդ բաժնի 9-րդ կետով՝ Հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ

Թիվ 010795 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակի, «Թեստային առաջադրանքներ» բաժնի 42-րդ և 48-րդ թեստային հարցերից ստացած 0-ական միավորը փոփոխել և շնորհել 1-ական միավոր, իսկ 45-րդ թեստային հարցից ստացած 0 միավորը թողնել անփոփոխ, 2-րդ, 3-րդ և 4-րդ խնդիրների համար ստացած 28 միավորը փոփոխել և դրանց համար լրացուցիչ շնորհել համապատասխանաբար 1, 2 և 1 միավորներ. արձանագրել, որ թեստային բոլոր առաջադրանքների ընդհանուր հանրագումարային միավորը 48 միավոր է, իսկ խնդիրներինը՝ 32 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ

_____

_____

_____